

աւծ գնալու իսկ երբ Պ. Պոպով կրկին ընդդիմացաւ, այն տաեն պատասխանեց նա, թէ Գաւառապետն զիս իրեն յանձնել է, և թէ ինքն է պատասխանատու ամենայն վաստուց՝ որ պատաշին ինձ. և որովհետեւ այնպիսի խաւարի մէջ կարելի է դիւրաւ գլորի, և վաստիկ, անոր համար ինքն այլ և կարող չէ յառաջ գնալ, այլ հարկ է սպասել մինչև լուսանայ. Այս բանս իմանալով, սրանց շատ ընդհակալ եղայ Գաւառապետին իմ վրաս ունեցած խնամոց և հսկողութեան: Ոչ ինչ հեռի այն տեղէն՝ ուր մենք կանգ առել էինք, Քուրդը բաւական մեծութեամբ այր մը գտան, ուր փութացինք պատասպարթ տեղատարարի անձրեւոյն և սաստիշունչ հովուն բռնութենէն: Պ. Պոպով, Մանուկով և սններ մտանք, և իսկոյն ընկողմաննեցանք զետինը տարածուած զգեստուց վրայ. իսկ այլք տեղուոյն անձութեան պատճառաւ՝ մէկ կողմը բարան վրայ տարածուեցան: Անոնց բաղդէն՝ պնձեն որ մինչեւ այրին ներքսագոյն կողմը կը հասնէր, տակաւ առ տակաւ դադրեցաւ, և առ վայր մի սրողեալ լուսինն՝ սրբնթաց ամպերուն միջն ակսաւ գուրու նայիլ:

Թէպէտեւ սասակի ծարաւան կը տանջէր զմեզ, այլ չէինք կարող չիթեցըն նել զայն՝ մեր մօտերը բնաւ չուր չգտնուելով, և չուզերով ամենին զպչիլ քովիրնիս գտնուած շընքն՝ որ մի էր Մասեաց գագաթին ձեռակը. Մակայն ծարաւէն աւելի կը նեղէր զմեզ մեր զգեստուց թացութիւն. և որպէսզի հարրուխէ շրոնուինք, քովերնիս գտնուած շընքն մէջի ոգելից հեղուկով ոտքերնիս շինցինք:

Առաւտան գէմ այն ինչ ամսերն սկսան կարմրագունիլ և վարդագոյն ամպիներն սկսան սուրալ սփոխի երկնից պայծառ կամարին վրայ, ահա մենք ամէնքս ալ սորքի վրայ էինք. և առաւտան ժամը նին, երբ արեւուն առաջին ճառագայթներն անցնելով լիրան գոռող գագաթին վրայէն մեզի հասան, արդէն իսկ կը գտնուէինք մեր ընկերաց մէջ, որք սաստիկ վախցեր էին մեզի համար, տեսնելով նախընթաց երեկոյն թէ ինչպէս գոռող հսկայն (Մասիս) խիտ խիտ ամպոց սև քողով պատել էր իւր գլուխն:

ԵԼ. Բ Ի ՓՈՓԻՐՆ ՄԱՍԻՄ Պ. ՔՈՎԱԱԷՎԱԿԱՒԻ

Օգոստոսի 13 ին՝ մինչ մենք բարձրացել էինք 'ի Մեծն Մասիս, Պ. Քովալէվսկի՝ մեր ճանապարհորդութեան երկրորդ կարգադրիչն գնացել էր 'ի Փոքրն Մասիս գագաթն ելնելու և մեզի նման օդարանական դիտողութիւններ ընելու համար: Կը փափաքէր գարծեալ լուսատպել հեռուէն Մեծ Մասեաց գագաթը՝ ճիշդ մեր հոն հասած վայրկնին:

Փոքր Մասիս՝ թէպէտ շատ ցած է բաղդատութիւնամբ իր մերձաւոր ահազին հսկային, սակայն իր զարդիվը ներուն ուղղութեան համար՝ որք կը հասնին մինչեւ ց' 10⁰, և հրարզիսային սահուն և լործուն աւագոց և կոյտերուն պատճառաւ գտնարելաննի է:

Տասներեք անձինք առաւտան ժամը 10ին մեկնելով 'ի Սարդար Բուլակէ, միայն երկու հոգի Պ. Քովալէվսկի և Ա. Դուզքա խազախն կրցան ժամանել 'ի գագաթն է 1/2 ժամուն յետ միջը էին, մինչդեռ անոնց ուրիշ ընկերակիցն կիսուզի հարկադրեցան հրաժարիլ այս փորձէն:

Փոքր Մասեաց գագաթն բաւական ընդարձակութիւն ունի, ուր 50-100

ուսք բարձրութեամբ հրարդիխեայ ժայռեր դէպ ՚ի վեր ցցուել են . զագա-
թան հարաւային կողմը՝ վարը լճակ մը կայ հալած ձիւներէն ձեւ ացած : Տաճ-
կաստանի կողմէն սպառնալից մըրիկ մը պատճառաւ՝ Պ. Քովալէվսկի շկըր-
ցաւ երկայն ատեն կենալ գագաթան վրայ , ուստի և չկրցաւ գտնել սիպա-
ձեւ տառիք արձանագրիալ այն մեծ բարը , ինչպէս կը պատմէր ականատես
հայ ծերունի մը :

ԿՈՍՏԱՆԴԻՆԱՅ ԿԱՐՈՂԻՆՈՒՄԻ

ԱՌԱԾՔ ԿԱՄ ՍԱՀՄԱՆՔ

Սոյն հատուածս է կոստանդին կաթողիկոսի , որ կարգաւ մի առ մի
կը գնէ աստ իւրագանցիւր առաջինութեանց կամ մոլութեանց և ու-
թիշ առարկայից սահմանքը . և կայ գրեալ այս յիսկեփորիկն իի , որոյ
վերնազիրն է . «Այրազան կաթողիկոսի Հայոց Տեառն կոստան-
դեայ յիշատակ , այլ ճաշակ քեզ ՚ի վայրի մրգոց , Սահմանք մասանց
պէսպէս շարժմանց երկրի » : Խոր բովանդակ մասամբք շատ կը նմա-
նի այս հատուածս՝ բանից կամ պատախանեաց Սեկոնդոսի իմաս-
տասիրի առ կայսն Աղրիանոս , որ կը գտնուի Սովերաց առաջնին հա-
տորին մէջ . գրեթէ սահմաններուն ճշգութիւնն և պարզութիւնն մի և
նոյն է յերկուսն ևս . միայն թէ , առ իւր համառօտութեամբն և միւմն
իւր պերճախօսութեամբն՝ երկուքն ալ իրենց յատուկ գեղեցկութիւն
մուռնին :

Բնութիւն է՝ սկիզբն շարժման և դադարման Երկիւզ Է՝ ակնկալութիւն
չարի : Սրտմառութիւն է՝ եռալ շուրջ զրտիւն արեան : Հպարտութիւն է՝
հանութիւն իւր միայնոյ , Բարի է՝ որում ամեններեան ցանկան : Զար է՝
յորմէ ամենից է փախչելի : Միծանննութիւն է՝ նմանաբար բերել զպտա-
հումն վատ և լաւ : Բարեհրախտութիւն է՝ բարւոք մեարին յելս կենացն :
Բարի թէ յոգւոջ է խնդութիւն առնէ , թէ մօտ է՝ յօյս , թէ հեռի՝ դժուա-
րահաւատութիւն , թէ նս հեռի՝ անհաւատութիւն : Զար՝ թէ յոգւոյն է՝
տրամաւթիւն առնէ , թէ հեռի՝ երկիւզ , թէ նս հեռի՝ բաջակերութիւն կամ
արհամարհութիւն : Խնդութիւն և յօյս՝ բարեյուսութիւն առնէ : Յոյս և
դժուարհաւատութիւն՝ կեղակարծութիւն է՝ Երկիւզ և տրամաւթիւն՝ տա-
րակուսանք : Երկիւզ և քաջակերութիւն՝ վատահութիւն և համարձակու-
թիւն : Արգարութիւն է՝ հաւասարաբախութիւն : Կրկին է , է որ բատ հա-
ւասարութեան բերի՝ և է որ ըստ զիմաց : Անիբաւութիւն է՝ անհաւատսարու-
թեան բաշխողութիւն : Բարեհմտութիւն է՝ կամք առարինեաց ոչ յաղագս

1. Հատ հաւանական է՝ թէ սա ըլլայ կոստանդին Ա. կաթողիկոսն (ՃԳ դարուն ,
1220-1267) , որ մեր մատենագրութեան մէջ բաւական նշանաւոր տեղի մը կը գը-
րաւէ իւր այլնայլ վարդապետական թղթովք և կոնդակներով , իսկ մըս կոստանդին
անուամբ կաթողիկոսաց մասին բնաւ ծանօթութիւն չունիք գրութեանց նը-
կատամամբ :